

## ԿՐՈՆԱՊԱՏՄԱԿԱՆ

### ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՑԱԿՈԲՈՍՆԵՐԸ

(Եպոքականի տեսությ. էջ 72)

3.— ՑԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՆԴՔԱՅԻ

1.— Ավագ էր Յակոբոս Տեառնեղայր.— Նոր Կտակարանի մէջ զանազան առիթներով յիշուազ այդ Յակոբը, որ Տեառնեղայր մակղերով ծանօթ է, մեծ գծուարութիւններու առջև դրած է զիտունները և մեկնիչները, թէ Տեառնեղայր, կամ Նղայր Տեառն բացատրութեամբ ի՞նչ աստիճանի արենակցութիւն պէտք է իմաստու : Այդ խնդրին քննութեան տեսնենք թէ իր մասին ուրիշ ի՞նչ կենսագրական անհեկութիւններ հասած են մեզի :

Յակոբոս Տեառնեղայր Գալիլիացի էր, նազարէթ քաղաքէն : Հօրը անունն էր ըստ ոմանց կղէնվաս, ըստ այլոց Յովակի՛ արհեստով հիւսն (Մտթ. մկ. 55-56): Մայրը կը կոչուէր Մարիամ : Սոյն Մարիամը յիշուած է Յիսուսի հետեւող կիներու շարքին յատկապէս Անոր խաչէւութեան ասեն և ատէկ յետոյ (Մրկ. ժե. 40, Մտթ. իի. 56, Մրկ. ժե. 47, ԺԶ. 1, Ղուկ. իի. 10):

Յակոբ ունէր երեք կրտսեր եղբայրներ, Յովուս, Սիմոն և Յուդա, և մէկն աւելի քոյրեր (Մտթ. մկ. 55), որոնց ճէց թիւը և անունները չենք գիտեր : Մեկնիչներէն ումանց կողմէ տրուած երեք թիւը ենթագրաւակն է : Անվաերներէն պատմութիւն Յովսի ապագայ Հիւսանն երկու աղջիններ միան կը յիշէ որոնց անուններն են լիւսիս և լիւզիա : (Histoire de Joseph le Charpentier, Rédaction Copte, par P. Peeters, ch. II. p. 196, Evangiles Apocryphes I. Հատորին մէջ, Paris, 1911:)

Արդեօք Յակոբ ամուսնացած էր, կրթնանք հաստատական պատասխան մը տալ, հետեւցնելով Պօղոսի սա ընդհանուր մէկ խօսքէն . «Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն զքործել ինչ» (Ա. Կորնթ. թ. 5, 6): Պօղոսի բառերը, ոմանց կարծիքով, բաւական ոյժ ունիցիմք իշխանութիւն չգործել ինչ» (Ա. Կորնթ. թ. 5, 6): Պօղոսի բառերը, ոմանց կարծիքով, բաւական ոյժ ունին հիմ գտանալու հաստատական պատասխանի մը :

2.— Տեառնեղբայրներու խնդիրը .— Այս մասին ծանօթ են երեք տեսութիւններ՝

1. Հելլիտեան տեսութիւն : 2. Յերուսամի տեսութիւն : 3. Եպիփանեան տեսութիւն :

1.— Հելլիտեան տեսութիւնը իր կոչումը կը պարտի Հելլիտիոսի (շ. 380), որուն համաձայն Տեառնեղբայրները Յովսէփի և Մարիամի զաւակներն էին Յիսուսէն յետոյ ծնած : ՓոքՓ. Mayor արգի գլխաւոր արտայատողն է այդ տեսութեան :

2.— Եթե ներկայի տեսութիւնը իր անունը կ'առնէ Յերանիմունէն (331-420), Ըստ այս տեսութեան Տեառնեղբայրները Յիսուսի մօրաքրոջ տղաներն են, Ա. Կոյսին քրոջը՝ Մարիամին և կղէնվասի որդիները (Յով. մթ. 25): Այս կարծիքը պաշտպանողներէն շատերը կը կարծեն թէ Տեառնեղբայրներէն երեք Առաքեալներ էին : Այս տեսութիւնը որդեգրած է Հռովմի հեկդեցինն : Խոյնը երբեմ տիրական էր Անգիոյ մէջ ալ բայց այժմ կը պաշտպանուի շատ քիչերու կողմէ :

3.— Եպիփանեան տեսութիւնը այսպէս կոչուած է Ս. Եպիփանի (310-403) կողմէ ջատագովուած ըլլալուն համար : Ըստ այս տեսութեան Տեառնեղբայրները Յովսէփի զաւակներն էին իր նախկին կնոջմէն : Այս է տեսակէւու Արեւելան Եկեղեցինն, և Անգլիոյ մէջ գիտականօրէն պաշտպանուած է Lightfoot կողմէ :

Քննենք այժմ այս տեսութիւնները . և ջանանք զեր առնել իւրաքանչիւրին պատմական արժէքը :

1.— Հելլիտեան տեսութեան գլխաւոր փաստերն են :

ա) Ղուկ. թ. 7 կ'ենթադրէ թէ Մարիամ ուրիշ զաւակներ ունէր : — Այս փաստը շատ անարժէք է . «Իր անդրանիկ որդին ծնաւ բացատրութենին անպայման չի» հետեւիր թէ ուրիշ զաւակներ ունեցաւ Մարիամ :

բ) Մտթ. Ա. 18-25 կ'ենթադրէ թէ Յովսէփի և Մարիամի տմուսնական յարաբերութիւնները սովորական ձեռվ էին Յիսուսի ծնունդէն յետոյ : — Այս փաստն ալ անարժէք է . «Եւ ոչ գիտէր զնամ, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկն խօսքէն չի հետեւիր թէ յիտ ծննդեան ամուսնական կեանքը սովորական ձեռվ կը շարունակուէր և Մարիամ ուրիշ զաւակներ կ'ունենար : ԱՄինչեւ հոս իրմէ անդին չի զօրեր :

Այսպիսի սխալ հնթագրութիւններու վըրայ հիմուսած տեսութեան մը որչափ խառնուտ և անընդունելի ըլլալը երկար բացատրութեանց կարօտ չէ:

2.— Յերօնիմեան տեսուրիւնը նուազ խառնուտ չէ, հակառակ Արքմանեան Ծիկղեցին կողմէ պաշտօնապէս որդեգրուած ըլլալուն:

Բայս այս տեսութեան նոր Կտակարանի մէջ Յակոր անունով երկու անձեր միայն յեռուած են: Յերօնիմոս իր տեսութիւնը կը պաշտամնէ սխալ թարգմանելով բարձը (= փոքրիկ) բառը, որ մէկ անգամ միայն արուած է այս Յակորին (Մթկ. ԺԵ. 40): «Փոքրիկ» բառը հաւանաբար կը նկարագրէ Յակորի մարմարական կազմը, ատիկա ու մէկ ակնարկութիւն ունի թաղգատութեան Զերեգեան Յակորով հետ, որ ն. Կտակարանի մէջ ոչ մէկ տեղ «Մէծ» չէ կոչուած:

Երկրորդ, այս տեսութիւնը կ'ենթագրէ Տեառնեղբայր Յակորի նոյնացումը Ալիքեան Յակորով հետ, և Տեառնեղբայրներու նոյնացումը երեք Առաքեաներու հետ՝ Յակոր, Յուղա, և Արմեն Կանանացի: Բայց Յուղ. ի. 5 որոշ կերպով կ'ըսէ. «Բանագի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նաս և և Պորժք Ա. 13, 14 բացայատօրէն դուրս կը ձգէ եղբարյները՝ տասներկու Առաքեաներու թիւնն: Ասէկ զատ եթէ տասներկու Առաքեաներու խումբին մէջ երեք եղբարյալը գոյութիւն ունեցած ըլլային, Աւետարանիչները պիտի յիշէին այս պարագան, ինչպէս յիշած են Յավանեան և Զերեգեան եղբարյները:

Երրորդ, կ'ենթագրէ նաև որ Մարիամ Կղէովայ, որ խաչին մօս կեցող կիսերուն մէջ էր (Յուղ. ԺԹ. 25), քոյլն էր Ս. Կոյսին, և թէ Կղէովայ մէկ ուրիշ ձեն և Սրամէական այս անոնին, որ նոյնպէս ներկայացուած է Ալփէոսով, այնպէս որ Ալփէոսի որդին Յակորոս Ս. Կոյսին քեռուորդին էր և Ս. Յովսէփի եղբարյորդին: Այս կը պահանջէ մեզմէ հաւատաւ թէ երկու քոյլեր կային կրող նոյն անոնըն, Մարիամ, ինչ որ անհաւանական է, և թէ այդ երկու քոյլերը ամուսնացած էին երկու եղբարյուներու Յովսէփի և Կղէովայսի — հետ, ինչ որ նուազ անհաւանական չէ: Իսկ Կղէովայսը այս անհաւանական պատճենը Ալփէոս = Cleophas և Ալփէոս = Alphæus անունները տառերու տեղափոխութեամբ ի-

րարու նմանցնել աւելի բառախաղ է քան սուուգաբանութիւն:

Յերօնիմոսի տեսութիւնը իր սեփական «քննական» տեսութիւնն էր, չլսուած մինչև այն ատեն, և աւելի ուշ՝ նոյնիկ իր կողմէն կասկածելի յայտարարուած (Եր. ad Hedibiam): Զարմանալի է որ ատիկա համարուած է իրեւ կաթոլիկ աւանդութիւն (Կմմտ. A New Commentary on Holy Scripture, Ch. Gore, p. 628 f. by C. T. Dimont):

3.— Ապիֆանեան տեսուրեան փաստերն են հետեւալիներ:

ա) Հնագոյն աւանդութիւնն է այս, որ արգէն ընթացիկ էր Պաղեստինի մէջ, Բ. գարուն: Անվաւելներէն Պետրոսի Աւետարանին և Յակովայ Նախաւետարանին(\*) մէջ ներկայացուած է այս տեսութիւնը:

բ) Յիսուս խաչին վրայէն իր մայրը պիտի չյանձնարարէր Յովհաննէսին (Յուղ. ԺԹ. 27): Եթէ Մարիամ ունեցած ըլլարը ուրիշ գաւակները, կամ, եթէ Տեառնեղբայրները ժամանակացող աշակերտներու կարգին:

գ) Տեառնեղբայրները Յիսուսի հանդէպ ունին երեց եղբայրներու գիրքը, որն քը զգան թէ կրնան երբեմն քննազատել և հաշակըսուել կրսաւերը (Կմմտ. Յուղ. ի. 2-10):

Եպիփանեան տեսութիւնը վաղուց և կիր որդեգրուած է Արքելեան եկեղեցոյ Կղզէն և կը մինչեւ մայօր լաւագոյնը երեքին մէջ: Հայ. Եկեղեցին մէկ բնականարար նոյն տեսակէնն ունի և կը զանազանէ Տեառնեղբայր Յակորոսը՝ Ալփէան Յակորոսն: Հետեւաբար չենք կրնար ընդունել երկու Յակորներուն նոյնացումը և ըսել թէ ատիկա է Աթարոյական հշմարտութիւն մը և սոսուզութիւն մը որ միտքը կը գուացնէ ընդմիջուած, ինչպէս Կ'եղբարականէ Սինին մէջ հայացուած յօդուած մը (տես 1911 Էջ 23):

3.— Յակորոսի կոչումը. — Յակորոս — ինչպէս իր միւս եղբայրները — չէր հաւատացած թէ Յիսուս սպասուած Մեսափան է, և Անոր քարոզութեանց ընթացքին բնաւ չէ յիշուած թէ եղբայրներն ալ կը գտնուելի Անոր հետեւողներուն բացմութեան մէջ: Հնդկակառակը, պատճենած են

(\*) Գոյւած չ. 180ին, ուեւ Le Protévangile de Jacques etc. par Emile Amann, Paris, 1910, 100;

քանի մը դէպքեր ուր կը տեսնենք մէ ինչ-  
պէս իրենք Յիսուսէն հեռու կը մնալին  
(Մտթ. ԺԲ. 46), նոյնպէս ալ Յիսուս կը  
մերժէ իրենց հետ կրապարակ հլւկ (Յովէ.  
կ. 1-10): Տեսանեղբայրները իրենց թիրա-  
հաւատութեան մէջ մնացին մինչև Յիսուսի  
յարութիւնը, և այն ատեն միայն հաւատա-  
ցին անոր, երբ յատկապէ երկցաւ Ան Յա-  
կոբին (Ա. Թաղթ Կոր. ԺԵ. 7), Պարագանե-  
րու մանրամանութիւնը, հակառակ իր մեծ  
կարերութեան, չէ յշշուած ն. Կտակա-  
րանի մէջ: Սակայն ուրիշ անվաւեր գրուա-  
ծի մը մէջ պահուած է աւանդութիւնը:

Աւետարան բա Ներայիցնոցը — զոր Light-  
foot կը համարի իրեն մին կախագոյններէն  
և շատ յարգելներէն անվաւեր պատմու-  
թիւններու (Gal. 2, 274) — Յնիքնիմունէն  
(de Vir. III. 2) մէջ երերուած է հետեւեալ  
կերպով. «Ճէքը, իր յարութիւնին յատոյ  
երկցաւ Յակոբի, որ երգում ըրած էր թէ  
հաց պիտի չուտէչ այն ժամէն սկսեալ յո-  
րում նա խմած էր Տիրոջ Բաժակը՝ մինչև  
որ տեսնէր զայն մեռելներէն յարութիւն  
առած: Յիսուս, ուստի, հաց առաւ և օրհ-  
նեց և կորեց զայն, և առաւ Արդարն Յա-  
կոբի, և ըստաւ անոր. Եղբայր, կեր քու  
հացգ, որովհետեւ Մարգու Որդին մեռելնե-  
րէն յարութիւն առաւ: Նոյն պատմու-  
թեան ուրիշ օրինակներ այ կան, որոնց մէջ  
երրումը կը սկսի, ոչ թէ Վերջին Ընթրի-  
քէն, այլ, Խաչելութենէն (տես Աւետարա-  
նին Nicholson-ն Հրատարակութիւնը, էջ  
62 շ. և Mayor Ս. Յակոբին Ներածութիւ-  
նը, էջ XXXVII ո.): Կարելի է, Վերջին Ըն-  
թրիքի ակնարկութիւնը ծագած է այն իրո-  
գութիւնէն որ Ս. Յակոբ ճեած է իր երգումը  
Տիրոջ խօսքերուն համեմատ, որը Ան խօ-  
սեցաւ Վերջին Ընթրիքի ատեն. և Այլքս  
պիտի չխմեմ օրիլիս բերքէն մինչև որ Աս-  
տունոյ Թագաւորութիւնը գայx (H. D. B.  
James, Mayor):

Սա իրողութիւնը պարզ է որ Յիսուսի  
Յարութիւնն և մանաւանդ Համբարձումն  
յետոյ Յակոբ, և, գրեթէ անկասկած, միև  
եղբայրներն ալ Ասպաքեալներուն հետ էին  
(Գործ. Ա. 14) այլքս:

4. — Յակոբոսի դիրքը. — Ինչպէս տե-  
սանք Յակոբոս շատ ուշ հաւատաց Յիսուս-  
սին, սակայն պէտք չէ զարմանանք զայն  
տեսնելով ոչ միայն Երկուտասաններու հա-

մահաւասար գիրքի վրայ, այլ նոյնիսկ ա-  
նոնցմէ վեր ալ:

Պօղոս, իր գարձէն վերջ, երբ առաջին  
անգամ կ'այցելէր Երուսաղէմ (չ. 38) Յա-  
կոբը արդէն առաջնակարգ դիրք ունէր Եկե-  
ղեցիին մէջ (Դղտ. Ա. 18-19):

Պետրոս Առաքեալ երբ հրաշալի կերպով  
պատուեցաւ Երուսաղէմի բանտէն (44 թ.)  
և եկաւ Մարգոսի տունը, պատուիրեց որ  
Յակոբին պատմեն զայն, և ինքը ելաւ ու-  
րիշ տեղ զնաց (Գործ. ԺԲ. 17):

Ժամանակ մը յետոյ անիկա մեծագոյն  
հեղինակութիւնն ունէր, որուն եղած ակ-  
նարկութիւններէն մին և . . . Եակորսու և  
Կեփաս և Յովհաննէս, որ Կարծեալ սիւնքն  
էին . . . (Դղտ. Բ. 9) Պօղոսի գրէն, Յա-  
կոբուսը առաջն կը գնէ: Դիտել Կ'արծէ որ  
Յիսուսի սիրելի եռանունը նորէն կազմուած  
է, բայց այս անգամ վերջինը առաջին ե-  
ղած, իր համանունին և նոգեկիցին չնորհիւ:

Յակոբը իրեն նախագահ կը տեսնենք  
Երուսաղէմի Ֆողովին մէջ (51 թ.), ուր  
հեթանոսութիւնն է գարգողները. թւիտատելու  
կանոնական պաշարկը մերժուեցաւ, Յա-  
կոբի և Պօղոսի և այլոց հաւանութեամբ:

Պօղոս իր Երուսաղէմ չորրորդ գալուս-  
տին (54 թ.) նորէն Յակոբոսի քով կ'եր-  
թայ, բոլոր երեցներն ալ հոն կը հաւաք-  
ուին, և անոնց կը պատմէ իր քարոզու-  
թեանց արգինքը (Գործ. Ի. 18-19):

Գաղաւացւոց Թուղթին մէջ իշխաւած է  
շատ կարելով պարագայ մը, ուր Յակորսու  
պազէցութիւնը Երուսաղէմէն մինչև Ան-  
տիոք ճառագայթելու, Պօղոսի իսօսքերուն  
հետ միասին, իր բարերար գերը կ'ունենայ  
Պետրոսը կեղծաւորութիւնն ետ կեցնելու:  
Աւելորդ չէ կը կարծենք այդ հատուածը  
բերել հոս. և Այլ յարժամ եկն Կեփաս յԱն-  
տիոք, ընդգէմ գարձայ նորա, քանզի գոգ  
իրեն սպատեալ իմ էր. քանզի մինչև եկ-  
եալ էին ումանք առ ի Յակոբայ, ընդ հե-  
թանոսս ուտէր անխափիր. իսկ իրեն եկին,  
զատանէր և որոշէր զանձն, երկուցեալ  
յախցանէ որ ի թլփատութիւնն անափ էին.  
և կեղծաւորութիւնը ընդ նմա և լու հրեայքն,  
մինչև Բանահարս անգամ խոնարհցաւ ի  
նոցա կեղծաւորութիւնն: Այլ իրեն տեսի,  
թէ ոչ ուղղի զնան ի ճշմարտութիւն Աւետա-  
րանին, ասիմ ցկեփաս առաջի ամենեցուն.  
իթէ դու որ Հրեայր ես՝ կեթանոսարար և

ոչ հրէարար կեաս, զիա՞րդ ստիպես հեթանոսաց լինել հրէարէն (Թղտ. Բ. 11-14):

Առաջին եկեղեցւոյ մէջ Յակոբոսի պաշտօնական զիրքին զերաբերեալ տեղեկութիւններ պահուած են Եւսեբոսի Եկեղեցական Պատմութեան մէջ, զոր քաղած է ուրիշներէն: այսպէս. . . Ապա և Յակովու այն որ անուանեալ կոչէր Եղբայր Տեառն, քանզի ի նա որդի անուանէր Եղովուէփայ: Բայց Յովսէփ Հայր Քրիստոսի, որում խօսեալ Կոյսն, մինչչեւ եկեղեալ ամիմեան՝ գտաւ յլացեալ ի Հոգեւոյն Սըրբոյ, որպէս և ուսուցաններ գլորք ուուրբք Աւետարանի: Արդ, ոսյն այս Յակովոսս, զոր առաջինքն արգար կոչէին գասն սքանչելի առաքինութեանցն, պատմեն՝ եթէ ընկալաւ սա զառաջին աթոռ եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Երուսաղմանցուց: Եւ Կղեմէս ի վեցերորդ զիրս իւրց Հրահանգացն աւանդէ զննանէ այսպէս: Զի Գետրոս, սաէս, և Յակովոսս և Յովսէփանէս յետ վերանալոյց Փրկչին մերոյ, որպէս առ ի Տեառնէ նախապատուեալք ոչ եթէ ի վերայ պատուոյ և փառաց մրցելով, զՅակովոս զերգարն ընթրեցին Եպիսկոպոս Երուսաղմանցուց: Եւ նոյն իսկ գարձեալ ի սոյն յիօթներորդ զիրս իւր այսպէս ասէ զննանդէ: Եթէ Յակովոսս Արգարոյ և Յովհաննու և Պետրոսս իետ յարութեան իւրոյ ետնոցա Տէրն մեր զգիտութիւն իւր, և նուր ետուն այլոց առաքելոցն, իսկ առաքեալքն եօթանանից, յորս էր և Բանարասաւ բայց երկու էին որոց անուանք Յակովոս էին, մի՛ Արգարն զօր յաշտարակէ անմի ընկեցին, և ի ձեռանք թափչին ձաղկաւ հարաւ և մեռաւ: իսկ միւս այն՝ որոյ գլուխն հատաւ: Զօյն իսկ զայն Յակովոսս Արգար՝ և Պօղոս յիշատակէր ի գրելն իւրում այսպէս: Եթէ, Զայլ ոք յառաքելոց անմի եռ ոչ տեսի, բայց միայն զՅակովոս զեղբայր Տեառն (Եւս. Պատմ. Եկկ. Դեկտ. Բ. Գլխ. Բ.):

Դարձեալ ուրիշ տեղ մը կը պատմէ թէ Յակորի Եպիսկոպոսական աթոռը պահուած էր Երուսաղմէմի եկեղեցւոյն մէջ մինչչեւ իր ժամանակը (անդ, Դպր. է. Գլխ. Բ.):

Հիպոգիլոսոսի անունով մեզի հասած կասկածելի և անհարացատ գրուածներու կարգին Եօթանասուն Առաքելոց ցուցակ մըս ակալ է առուած է Յակորը Տեառնեղբայր (ձձէլքիթօս) Եպիսկոպոս Երուսաղմէմի:

Արդ, կարելի է մտածել թէ ինչո՞ւ համար տաներկու Առաքեալներէն մէկը չեղաւ Երուսալէմի առաջին գաւակալը և Յակորուին վլճակեցաւ ատիկաւ Եւսեբիոսս, ինչպէս անսանք վերոգրեալ հատուածին մէջ, Կղեմէսէն առնելով դիտել կու տայթէ Պետրոսս Յակորոսս և Յովհաննէս պատուի համար իրարութիւն ունեցան և գորսէն մէկը ընտրեցին Երուսալէմի Եպիսկոպոսս: Հապալինչ պատճառառք ընտրեցին կրնայ հարցուիլ: Մէր կողմէն կրնանք ընել հետևեալ նկատողութիւնները:

Ա. — Յիսուսի Եղբայրներուն մէջ, ինչ ձեռով ալ առնենք ատիկաւ, Յակորը առաջինն էր և ժառանգականորէն իրեն կը պատկանէր Յիսուսի գործին առաջնորդելու իրաւունքը: Իր ուշ հաւատալը որ է կերպով իրմէ չէր պակսցուցած այդ իրաւունքը: Մէր բասծը աւելի կը հաւատալու իրարութիւնը յաջորդ տեսնելով իր կրտսէր հղայրը, կամ ըստ ոմանց հօրեղորդորդին, Շմաւունը (\*) և ապա Յուղան, Դմիտրիանու կայսեր օրով (81-96):

Այս առիթով միտքս կու գան Մակարեան Եղբայրները, որոնք հետզհետէ իրարու յաջորդելով զիր բռնեցին քաղաքական պատութեան գրօնակը: Ինչ որ երկու զարյառաջ քաղաքական կեանքին մէջ տեղի ունեցաւ, նոյնը տեղի կ'ունենար երկու գար յետոյ կրստական կեանքին մէջ:

Բ. — Առաքեալները աւելի քարոզութեան ետքէ էին, ամբողջ աշխարհ իրենց կը պապէլ, ուստի չէին ուզեր տեղ մը հաստատուի և կապուած մատէ, այլ աւելի լաւ կը համարէին շարունակ ըըլիլ և քարոզել: Կետեարար, ինչպէս ուրիշ քաղաքներու նոյնպէս Երուսաղմէմի մէջ ալ Եպիսկոպոս մը կարգելով բաւականացան:

Մէր կարծիքով այս երկու գլխաւոր պատճառներու համար էր որ Յակորը եղաւ Երուսաղմէմի Եկեղեցւոյն առաջին Եպիսկոպոսը:

Ն. Վ. ՄՈՎՅԱԿՈՒՆ

(Անցը յաջուղով)

(\*) Եւսեբիոս, Հեղեսիպոպուէն առնելով կը զրէ: Յետ վկայելոյ Յակորոս Արքայութ եկաց եպիսկոպոս Շմաւուն կղեմէսէն միարան հաւատաթեամբ հասարակաց, զի երկրորդ Հորեղքորդ էր Տեառն մերոյ (Պատմ. Եկկ., Դպր. է. Գլխ. Բ.):